## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2015 թ. N 186-Ն

ք. Ստեփանակերտ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 2-Ն որոշման N1 հավելվածի 45-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացվելիք 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի
N 186-Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ

| Ծածկագիրը | Բուհը, մասնագիտությունը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | ***ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*** | | |
| 010100 | Մաթեմատիկա | 1 | |
| 010300 | Մաթեմատիկա:Համակարգչային գիտություններ | 1 | |
| 010400 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | 1 | 1 |
| 011400 | Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում | 1 | |
| 020300 | Երկրաբանություն | 1 | |
| 030500 | Իրավագիտություն | 1 | 2 |
| 030700 | Միջազգային հարաբերություններ | 1 | 2 |
| 031400 | Մշակութաբանություն | 1 | |
| 032300 | Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ) | 1 | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | 1 | 1 |
| 080200 | Կառավարում | 1 | 1 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | *11* | *7* |

| | | | |
|---|---|---|---|
| **ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** | | | |
| 081300 | Կառավարման տեղեկատվական համակարգեր | 1 | |
| 270100 | Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն | 1 | |
| 270300 | Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում | 1 | |
| 270400 | Քաղաքային տնտեսություն և ջերմագազամատակարարում | 1 | |
| 271500 | Ճարտարապետություն և դիզայն | 1 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **5** | **2** |
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** | | | |
| 080600 | Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (լեռնամետալուրգիայի ճյուղում) | 2 | |
| 090100 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | 1 | |
| 130100 | Օգտակար հանածոների հետախուզում և մշակում | 1 | |
| 140200 | Էլեկտրաէներգետիկա | 1 | |
| 140500 | Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ | 1 | |
| 280400 | Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում (լեռնամետալուրգիայի ճյուղում) | 1 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **7** | |
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** | | | |
| 080100 | Բնօգտագործման տնտեսագիտություն | 1 | |
| 080200 | Կառավարում | 1 | 1 |
| 080300 | Ֆինանսներ | 1 | 1 |
| 081500 | Հաշվապահական հաշվառում | 1 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **4** | **3** |
| **Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** | | | |
| 051500 | Հատուկ մանկավարժություն (սուրդոմանկավարժություն) | 1 | |
| 070300 | Ռեժիսուրա | 1 | |
| 070600 | Պարարվեստ (ժողովրդական) | 1 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3** | |
| **ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ** | | | |
| 070100 | Գործիքային կատարողականություն<br>-դաշնամուր<br>-լարային գործիքներ | <br>1<br>1 | |

| | | | |
|---|---|---|---|
| 070100 | Վոկալ արվեստ<br>-ակադեմիական<br>-ժողովրդական<br>-էստրադային-ջազային երգեցողություն | <br>1<br>1<br>1 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***5*** | |
| ***ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ*** | | | |
| 070200 | Դերասանական արվեստ | 1 | |
| 071300 | Կինոարվեստ | 1 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***2*** | |
| ***ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ*** | | | |
| 071900 | Գեղանկարչություն | 1 | |
| 072400 | Հագուստի մոդելավորում | 1 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***2*** | |
| ***ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*** | | | |
| 060100 | Բուժական գործ | 7 | 5 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***7*** | ***5*** |
| ***ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ*** | | | |
| 032100 | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 2 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***2*** | |
| ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*** | | | |
| 311107 | Ագրոբիզնես և շուկայաբանություն | 1 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***1*** | |
| ***ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*** | | | |
| 38.03.01 | Տնտեսագիտություն | 1 | 1 |
| 38.03.02 | Կառավարում | 1 | 1 |
| 40.03.01 | Իրավագիտություն | 1 | 1 |
| 41.03.05 | Միջազգային հարաբերություններ | 1 | |
| 42.03.02 | Գովազդ և հասարակության հետ կապեր | 1 | |
| 43.03.02 | Զբոսաշրջություն | 1 | |
| 55.05.01 | Կինոյի և հեռուստատեսության ռեժիսուրա | 1 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***7*** | ***3*** |
| ***ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*** | | | |
| 031200 | Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն | 1 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***1*** | |
| | ***ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՏԵՂԵՐ*** | ***3*** | |
| | ***ԸՆԴՀԱՆՈՒՐԸ*** | ***60*** | ***20*** |

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ** **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**